ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունիսի 2015 թվական N 92–Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի NN 15-Ն, 20-Ն, 21-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ մասով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 6-ի թվով 3 (երեք) որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող <<Մուշ-2>> թաղամաս 7-րդ փողոց N 4/2 հասցեի հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասի վարձավճարի մեկնարկային չափ սահմանելու մասին» N 15-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«1. Մրցույթով կառուցապատման իրավունքով, առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով, Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող <<Մուշ-2>> թաղամաս 7-րդ փողոց N 4/2 հասցեի 08-001-0083-0105 կադաստրային ծածկագրով 35,0 (երեսունհինգ) քառակուսի մետր մակերեսով առանձնացված՝ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը տրամադրել օգտագործման՝ 50 (հիսուն) տարի ժամկետով»,

2) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գորկու փողոց N 108/3 հասցեի անշարժ գույքը աճուրդային կարգով օտարելու և աճուրդի մեկնարկային գին հաստատելու մասին» N 20-Ն և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Արևելյան շրջանցիկ ճանապարհ N 45/1 հասցեի անշարժ գույքը աճուրդային կարգով օտարելու և աճուրդի մեկնարկային գին հաստատելու մասին» N 21-Ն որոշումների 1-ին կետից հանել «թույլատրել» բառը:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան
Ա.Բաղրամյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Հ.Խաչատրյան

Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ. Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան
Տ. Փանոսյան

Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

15 հունիսի 2015թ.
ք.Գյումրի